**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3**

28.11.2024 թվականին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/133-1 գնման պայմանագրի

ք. Մեծամոր

«08» Մայիս 2025թ.

Մեծամորի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար՝ Վ. Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Գլոբզոն էնթերփրայսիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Գալստյանի, ով գործում է «Գլոբզոն էնթերփրայսիս» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 28.11.2024թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/133-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.8 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված մասով «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը**» սյունակում կատարման ժամկետը խմբագրել և ներկայացնել նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «...պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 120 օրացուցային օրվա ընթացքում»:

1.2 Պայմանագրի Հավելված թիվ 2-ի և 03.02.2025թ-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի «ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. «Աշխատանքների սկզբից մինչև 120 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
gnumnermecamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ900332239426
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝ ____________ Վ. Խաչատրյան
/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ԳԼՈԲԶՈՆ ԷՆԹԵՐՓՐԱՅՍԻՍ» ՍՊԸ
Ք. Երևան, Լեո Կամսարի փող. 30/3 շենք, բն 9
globezone.enterprises@gmail.com
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022768841001
ՀՎՀՀ 08281383

Տնօրեն՝ ____________ Ա. Գալստյան
/ստորագրություն/
Կ.Տ.